# ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

# ՏԱՐԵԳԻՐՔ



ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

# ՏԱՐԵԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ 2025



**ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ**
Երևանի Սայաթ-Նովայի անվան
երաժշտական դպրոցի տնօրեն

**Սիրելի՛ ընթերցող,**

Քո ձեռքում Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի 2024-2025 ուսումնական տարվա մասին պատմող տարեգիրքն է, որում զետեղված են համառոտ տեղեկություններ՝ ուսումնական տարվա ընթացքում դպրոցի գործունեության և իրականացված ծրագրերի վերաբերյալ: Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը, հանդիսանալով մշակութային կրթության ոլորտում հանրապետության առաջատար հաստատություններից մեկը, առանձնանում է իր ավանդույթներով, մանկավարժական կազմի բարձր որակավորմամբ, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատուկ մոտեցմամբ և ուսուցման որակով, ինչը հնարավորություն է տվել տասնամյակներ շարունակ կրթել և դաստիարակել հայկական երաժշտարվեստի փայլուն ներկայացուցիչների, կիրթ և բազմակողմանի զարգացած սերունդների: Դպրոցն ուրույն դերակատարություն է ստանձնել քաղաքամայր Երևանի մշակութային կյանքում՝ հանդես գալով նոր նախաձեռնություններով, ծրագրերով, մշակութային հագեցած առօրյայով: Դպրոցի գործունեությունն ու ընթացիկ ծրագրերը ներկայացնող տարեգիրքը, որում նաև զետեղված է տեղեկատվություն դպրոցի մանկավարժական կազմի, լավագույն սովորողների, շրջանավարտների, հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիրների վերաբերյալ, վստահ եմ, կհետաքրքրի մշակութային կրթության ոլորտի շահառուներին և, ընդհանուր առմամբ, երաժշտասեր հանրությանը:



## 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված ծրագրեր

# 2024

















## Նոյեմբերի 5

Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում դպրոցում հյուրընկալվեց Ապարան համայնքի արվեստի դպրոցի պատվիրակությունը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը և Երևանի փոխքաղաքապետ Լևոն Հովհաննիսյանը: Հյուրերը նախ հետևել են Ապարան համայնքի արվեստի դպրոցի սաների կերպարվեստի աշխատանքների ցուցահանդեսին, ապա ունկնդրել են համերգային ծրագիրը, որի ընթացքում երաժշտական կատարումներով ելույթ են ունեցել Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության արդյունքում ձևավորված միացյալ համույթներն ու նվագախմբերը:


AUGUST FORSTER











## Դեկտեմբերի 13

Դպրոց այցելեց մեր ժամանակների լեգենդ, կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանը: Երևանի քաղաքապետարանի հատուկ պատվերով վերջինս հեղինակել է «Խաղիկներ» նոր խմբերգաշարը, որից հատվածներ կատարեցին դպրոցի ավագ երգչախմբի սաները՝ խմբավար Կարեն Ամիր Լաթիֆիի ղեկավարությամբ: Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների հավաքական երգչախումբը, որի կազմում ընդգրկված էին նաև դպրոցի ավագ երգչախմբի սաները, խմբավար Նարինե Ոսկանյանի ղեկավարությամբ, 2025 թվականի հունիսի 7-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում առաջին անգամ կկատարեն Մանսուրյանի կոթողային ստեղծագործությունը:






























## Դեկտեմբերի 19

Մեծ դահլիճում համերգ-հանդիսությամբ նշվեց դպրոցի երկարամյա տնօրեն, վաստակավոր մանկավարժ, հայկական կատարողական արվեստի նվիրյալ Պետրոս Հայկազյանի ծննդյան 100-ամյակը: Հոբելյանական երեկոն երկար տարիներ անց համախմբել էր դպրոցի շրջանավարտներին, ներկա և նախկին մանկավարժներին, որոնց թվում էին վաստակաշատ մանկավարժներ Էլզա Թանդիլյանը, Ստելլա Կարապետյանը, Հովհաննես Մուրադյանը և այլք: Ներկա էին նաև Պետրոս Հայկազյանի ընտանիքի անդամները: Երեկոյի համերգային մասում իրենց կատարումներով փայլեցին դպրոցի լարային բաժնի աշակերտները՝ այդպիսով հարգանքի տուրք մատուցելով հայկական երաժշտարվեստի երևելիներից մեկի՝ Պետրոս Հայկազյանի հիշատակին:











## Փետրվարի 1-10

Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակը մեկնարկեց դպրոցի նոր նախաձեռնության իրականացմամբ: Տնօրինության նախաձեռնությամբ՝ դպրոցում այսուհետ գործելու է Գերազանցության ծրագիրը, որը միտված է տաղանդավոր սաների բացահայտմանն ու նրանց հետագա կատարելագործմանը: Դպրոցի 13 աշակերտներ մասնակցեցին մրցութային ծրագրին, որոնցից 5-ը ընդգրկվեցին Գերազանցության ծրագրում: Ծրագրի շահառուների դասատուները յուրաքանչյուր ամիս ստանալու են 50000 ՀՀ դրամ հավելավճար: Գերազանցության ծրագրի առաջին փուլի շահառուներն են՝

- **Ամելի Արզումանյան,** դաշնամուր, 3-րդ դաս, *դասատու՝ Նելլի Նադարյան*
- **Հրաչյա Ղազարյան,** դաշնամուր, 3-րդ դաս, *դասատու՝ Մարինե Մարգարյան,*
- **Պողոս Մարի,** ջութակ, 2-րդ դաս, *դասատու՝ Կարմեն Հարությունյան*
- **Վահան Քոչարյան,** հոբոյ, 4-րդ դաս, *դասատու՝ Հարություն Շախկյան*
- **Լևոն Ավետիսյան,** գալարափող, 5-րդ դաս, *դասատու՝ Արթուր Հովհաննիսյան*


AUGUST
FORSTER








AUGUST
FORSTER












## Փետրվարի 6

Դպրոցի Մեծ դահլիճում կայացավ «Սերունդների երկխոսություն. հանդիպումներ Սայաթ-Նովայի անվան դպրոցում» խորագրով անցկացվող նախագծի առաջին հանդիպումը: Դպրոցի տեսական բաժնի մանկավարժ, երաժշտագետ Նաիրա Գրիգորյանի նախաձեռնությամբ տարիներ ի վեր իրականացվող ծրագիրը հանդիսատեսին ներկայացավ նոր բովանդակությամբ և ասելիքով: Ծրագրի շրջանակներում դպրոցում հյուրընկալվեց անվանի կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը: Երկար տարիներ դպրոցում կոմպոզիցիայի դասարանը ղեկավարած արվեստագետի հետ հանդիպմանը դպրոցի սաներն ըստ արժանվույն էին պատրաստվել: Սաթյանի հատընտիր ստեղծագործություններից բաղկացած համերգային ծրագրին նախորդեց դպրոցի սաների հարցերից կազմված հարցազրույցը, որի ընթացքում կոմպոզիտորը խոսեց անցած ստեղծագործական ուղու, կյանքի հետաքրքիր դրվագների, մանկության ու պատանեկության տարիների մասին:












## Փետրվարի 24

Դպրոցում վարպետության դասեր անցկացրեց անվանի թավջութակահար, ՀՀ վաստակավոր արտիստ, դպրոցի նախկին սան Նարեկ Հախնազարյանը: Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ իրականացվող «Արտիստը՝ դպրոցին» ծրագրի շրջանակներում Նարեկ Հախնազարյանը հարազատ կրթօջախում դպրոցի սովորողների հետ կիսվեց արժեքավոր խորհուրդնե-րով, դրանք ուղեկցելով դպրոցի հետ կապված հիշողությունների, թավջութակի կատարողական վարպետության ճանապարհի ուշագրավ դրվագների մասին հետաքրքրաշարժ պատմություններով: «Արտիստը՝ դպրոցին» ծրագիրը եզրափակվեց ապրիլի 3-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայա-ցած գալա համերգային ծրագրով, որի ընթացքում Նարեկ Հախնազարյանի հետ նույն բեմում ելույթ ունեցան դպրոցի սովորողներ Լոռի Շատոյանը, Նարե Մինասյանը, Լեոնա Բաղդասարյանը և Ալլա Այվազյանը:













## Ապրիլի 8

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացավ «Բեմում դասատուներն են» խորագրով համերգային ծրագրի գարնանային համերգը: Աշխարհի մեծ բեմերին արժանի համերգային ծրագիրը՝ փայլուն կատարումներով, իրական բացահայտում էր ներկաների համար: Դպրոցի դասատուները կատարողական վարպետությամբ վերահաստատեցին երաժիշտ-կատարողի բարձր կոչումը՝ ունկնդրի համար ակներև դարձնելով մեկ անհատականության մեջ արտիստի ու նվիրյալ մանկավարժի հոգեկերտվածքի ողջ ներդաշնակությունը: Ջերմ ու հուզումնառատ երեկոն ավարտվեց նոր և հետաքրքիր մտահղացման իրագործմամբ. դպրոցի ուսուցչական կազմից ձևավորված երգչախումբն անզուգական կատարումներով գագաթնակետին հասցրեց ունկնդրի հրճվանքն ու գոհունակությունը, որն իր երախտագիտությունն ու ակնածանքը հայտնեց չդադարող ծափահարություններով:















## Ապրիլի 21-25

Դպրոցի նախաձեռնությամբ իրականացվող «Փայտփորիկ» սոլֆեջոյի առաջին հանրապետական օլիմպիադային ընդառաջ՝ տեղի ունեցավ սոլֆեջոյի դասատուների հավաք-սեմինարների շարքը: Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների շուրջ 200 մանկավարժներ և տնօրեն-ներ մասնակցեցին սեմինարներին, որոնց ընթացքում Օլիմպիադայի մասնա-գիտական հանձնախմբի անդամները ներկայացրեցին Օլիմպիադայի անց-կացման կարգը, մասնակցության պայմանները, տվեցին պարզաբանումներ առաջադրանքների և մասնակցության ուղեցույցի վերաբերյալ:












## Ապրիլի 30

Դպրոցում կայացավ Դաշնակահարների ներդպրոցական մրցույթի եզրափակիչ փուլը: Դպրոցի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններում սովորող դաշնակահարները երկփուլ մրցելույթներով վիճարկում էին դպրոցի լավագույն դաշնակահարի տիտղոսը: Մրցույթի ժյուրին՝ ԵՊԿ պրոֆեսոր Սերգեյ Սարաջյանի ղեկավարությամբ, ամփոփեց մրցույթի արդյունքները, ըստ որի՝ մրցանակային տեղերի արժանացան՝

**III ՄՐՑԱՆԱԿ**

- **Լիլի Նազարեթյան**, 4-րդ դաս, *դասատու՝ Արմենուհի Բադեյան*
- **Սիլվի Պետրոսյան**, 4-րդ դաս, *դասատու՝ Մարինե Մարգարյան*
- **Էլիզա Չիլինգարյան**, 4-րդ դաս, *դասատու՝ Անահիտ Լազարյան*
- **Լիզա Մարտիրոսյան**, *5-րդ դաս, դասատու՝ Անահիտ Կարապետյան*
- **Մարիաննա Կանդոյան**, 5-րդ դաս, *դասատու՝ Թամարա Հարությունյան*
- **Վահագն Մեղրոյան**, 6-րդ դաս, *դասատու՝ Թամարա Հարությունյան*
- **Սյունե Նարիմանյան**, 6-րդ դաս, *դասատու՝ Արմինե Շմավոնյան*
- **Աստղիկ Հարությունյան**, 6-րդ դաս, *դասատու՝ Կարինե Էլչյան*
- **Արեն Չախմախչյան**, 7-րդ դաս, *դասատու՝ Վիկտորյա Բալայան*
- **Արման Ջանիբեկյան**, 7-րդ դաս, *դասատու՝ Կարինե Էլչյան*
- **Մարիա Գաբրիելյան**, 7-րդ դաս, *դասատու՝ Նարինե Նիկողոսյան*
- **Օվսաննա Ջանիբեկյան**, 7-րդ դաս, *դասատու՝ Կարինե Էլչյան*

**II ՄՐՑԱՆԱԿ**

- **Անահիտ Բաբայան**, 4-րդ դաս, *դասատու՝ Իրինա Հակոբյան*
- **Արևիկ Վարդանյան,** 4-րդ դաս, *դասատու՝ Մերի Գրիգորյան*
- **Ստեփան Ամիրխանյան,** 4-րդ դաս, *դասատու՝ Ռուզաննա Խասապետյան*
- **Գաբրիելլա Մարուքյան,** 5-րդ դաս, *դասատու՝ Հասմիկ Հովսեփյան*
- **Տաթև Սարգսյան,** 5-րդ դաս, *դասատու՝ Կարինե Էլչյան*
- **Եվա-Մարիա Կիրակոսյան,** 5-րդ դաս, *դասատու՝ Կարինե Էլչյան*
- **Նարե Մայիլյան,** 6-րդ դաս, *դասատու՝ Արմենուհի Բադեյան*
- **Աննա Գևորգյան,** 6-րդ դաս, *դասատու՝ Հասմիկ Անչարակյան*
- **Արիանա Ավագյան,** 7-րդ դաս, *դասատու՝ Աստղիկ Հլղաթյան*
- **Ժանետ Խաչատրյան,** 7-րդ դաս, *դասատու՝ Մարինե Մարգարյան*
- **Աննա Հեքեքյան,** 7-րդ դաս, *դասատու՝ Հասմիկ Անչարակյան*
- **Իռեն Վանյան,** 7-րդ դաս, *դասատու՝ Աստղիկ Հլղաթյան*


AUGUST
FORSTER




























## Մայիսի 5-26

Կայացավ Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների 16-րդ մրցույթ-փառատոնը: Մրցույթն անցկացվում է 15 անվանակարգերում, որի շրջանակներում կայացած մրցելույթներում փայլուն հանդես եկան դպրոցի սաները՝ դպրոցին բերելով Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների 16-րդ մրցույթ-փառատոնի հաղթողի կոչումը:





















## Մայիսի 27

Երևանում և հանրապետության մարզերում կայացավ դպրոցի նախաձեռնությամբ իրականացվող «Փայտփորիկ» սոլֆեջոյի առաջին հանրապետական օլիմպիադայի նախնական ընտրության փուլը, որին մասնակցում էին Երևանի և ՀՀ մարզերի 65 երաժշտական և արվեստի դպրոցների 211 շրջանավարտներ (7-րդ դասարանցիներ)։ Օլիմպիադայի մասնակից՝ դպրոցի 19 սովորողներն էլ անցան եզրափակիչ փուլ։






AUGUST
FORSTER














## Մայիսի 31

Դպրոցում հյուրընկալվեցին Աշտարակի Ա. Այվազյանի անվան երաժշտական դպրոցի աշակերտներն ու դասատուները: ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ և Երևանի Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցի նախաձեռնությամբ իրականացվող՝ Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում այս տարի դպրոցները կհամագործակցեն ամենատարբեր ուղղություններով: Կիրականացվեն փոխայցելություններ, վարպետաց դասեր, կկազմակերպվեն համատեղ համերգներ: Աշտարակի Ա. Այվազյանի անվան երաժշտական դպրոցի պատվիրակությանը համերգային ողջույնով դիմավորեց «Բողբոջներ» ամենափոքրերի երգչախումբը, որից հետո Աշտարակից ժամանած պատանի երաժիշտները երևանյան հանդիսատեսին ներկայացան հրաշալի կատարումներով: Մարզաբնակ երեխաները համերգից հետո շրջեցին մայրաքաղաքում, այցելեցին Երվանդ Քոչարի թանգարան, Գաֆեսճեան քանդակների պուրակ:




















## Հունիսի 3

Դպրոցում կայացավ «Սերունդների երկխոսություն. Հանդիպումներ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում» ծրագիրը, որի հյուրն էր ՀՀ վաստակավոր արտիստ, բեմադրիչ, ռեժիսոր, դերասանուհի, Համազգային պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Նարինե Գրիգորյանը: Տաղանդաշատ արվեստագետը դպրոցի աշակերտներին, դասատուներին և ծնողներին ներկայացրեց անցած ուղին, խոսեց կյանքում և մեր իրականությունում արվեստի, կրթության, մշակույթի դերակատարության մասին, պատասխանեց աշակերտներին հուզող հարցերին: Հանդիպման ավարտին դպրոցի սաները ողջունեցին հյուրին գեղեցիկ համերգային կատարումներով:







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՊԱՏՎՈԳԻՐ

ՏՐՎՈՒՄ Է

«ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ին

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ









## Հունիսի 7

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, կայացավ Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների 16-րդ մրցույթ-փառատոնի հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում դպրոցը պարգևատրվեց Երևանի քաղաքապետի՝ «Լավագույն դպրոց» 1-ին կարգի պատվոգրով: Պարգևատրման արարողությունից հետո դպրոցի ավագ երգչախմբի սաները, Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների շուրջ 300 սովորողներից կազմավորված հավաքական երգչախմբի կազմում, կատարեցին մեծանուն կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանի նոր՝ «Խաղիկներ» խմբերգային ստեղծագործությունը:

















## Հունիսի 17

Դպրոցում կայացավ «Փայտփորիկ» սոլֆեջոյի առաջին հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը, որին մասնակցում էին Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի 39 դպրոցների 84 աշակերտներ:






AUGUST
FORSTER


AUGUST
FORSTER













## Հունիսի 27

Դպրոցում տեղի ունեցավ «Փայտփորիկ» սոլֆեջոյի առաջին հանրապետական օլիմպիադայի արդյունքների ամփոփման և մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը, որոնք հանձնեցին մրցանակակիրների պատվոգրերը: Մինչ մրցանակաբաշխության մեկնարկը՝ դպրոցի սաները ելույթ ունեցան համերգային կատարումներով: Օլիմպիադայի 16 մրցանակակիրներից 7-ը ներկայացնում էին Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը:

**Օլիմպիադայի դափնեկիրներ**

- **Մարիա Գաբրիելյան,** *դասատու՝ Նաիրա Գրիգորյան*
- **Ժանետ Խաչատրյան,** *դասատու՝ Քնարիկ Բաբաջանյան*
- **Մանե Ենոքյան,** *դասատու՝ Նաիրա Գրիգորյան*

**Օլիմպիադայի 3-րդ կարգի մրցանակակիր**

- **Արիաննա Ավագյան,** *դասատու՝ Քնարիկ Թորոսյան*

**Օլիմպիադայի 2-րդ կարգի մրցանակակիր**

- **Իռեն Վանյան,** *դասատու՝ Նաիրա Գրիգորյան*
- **Աննա Հեքեքյան,** *դասատու՝ Քնարիկ Թորոսյան*

**Օլիմպիադայի 1-ին կարգի մրցանակակիր**

- **Լոռի Շատոյան,** *դասատու՝ Քնարիկ Բաբաջանյան:*













## Հուլիսի 18

Դպրոցի Զանգերի համույթը (ղեկավար՝ Քնարիկ Բաբաջանյան) և ավագ երգչախումբը (ղեկավար՝ Կարեն Ամիր Լաթիֆի) մասնակցեցին Հայաստանի ազգային հերոս, հայազգի մեծանուն արտիստ Շառլ Ազնավուրի արձանի բացման հանդիսավոր արարողությանը:

## Հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիրներ

**Ամելի Արզումանյան, դաշնամուր, 3-րդ դաս., դասատու՝ Նելլի Նադարյան**

- 1-ին մրցանակ՝ Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 8-րդ միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)
- 2-րդ մրցանակ և Հատուկ մրցանակ Պատանի դաշնակահարների միջազգային մրցույթ (Վրաստան)
- 2-րդ մրցանակ՝ «Արտ պիանո» դաշնակահարների մրցույթ (Հայաստան)
- 1-ին մրցանակ՝ UJLUS XII դաշնակահարների միջազգային մրցույթ (Սերբիա)

**Տիգրան Ղազարյան, դաշնամուր, 2-րդ դաս., դասատու՝ Էլեն Կիրակոսյան**

- Արծաթե մրցանակ՝ «Ֆենիքսի մրցանակ» միջազգային մրցույթ
- 3-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)
- 2-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Ժանետ Խաչատրյան, դաշնամուր, 7-րդ դաս., դասատու՝ Մարինե Մարգարյան**

- 4-րդ մրցանակ՝ Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 8-րդ միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)
- 2-րդ մրցանակ՝ «Ամադեուս» միջազգային երաժշտական մրցանակաբաշխություն (Ավստրիա)

**Արևիկ Վարդանյան, դաշնամուր, 4րդ դաս., դասատու՝ Մերի Գրիգորյան**

- 2-րդ մրցանակ՝ «Արտ պիանո» դաշնակահարների մրցույթ (Հայաստան)
- 1-ին մրցանակ՝ UJLUS XII դաշնակահարների միջազգային մրցույթ (Սերբիա)

**Դավիթ Առաքելյան, սաքսոֆոն, 7-րդ դաս., դասատու՝ Քնարիկ Բաբաջանյան**

- 2-րդ մրցանակ՝ «Ալատոն» միջազգային մրցույթ (Ղազախստան)
- 2-րդ մրցանակ՝ «Նոր աստղեր» 12-րդ միջազգային մրցույթ (Ֆրանսիա)

**Քրիստինե Քելեգյան, տավիղ, 5-րդ դաս., դասատու՝ Մայա Սրապյան**

- 3-րդ մրցանակ՝ «ՀԲԸՄ-ն բացահայտում է տաղանդներ» մրցույթ (Հայաստան)
- 2-րդ մրցանակ՝ «Համփսթոն Ռուադս» միջազգային մրցույթ-փառատոն

**Հայկ Ավետիսյան, դուդուկ, 4-րդ դաս., դասատու՝ Հայկ Երեմյան**

- 3-րդ մրցանակ՝ «Արտ Սյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)
- 3-րդ մրցանակ՝ Խաչատուր Ավետիսյանի անվան մրցույթ

**Ալիսիա Առաքելյան, ֆլեյտա, 4-րդ դաս., դասատու՝ Լիլիթ Ներսիսյան**

- 1-ին մրցանակ՝ «Արտ Սյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)
- 2-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Եվա Աղասարյան, ֆլեյտա, 2-րդ դաս., դասատու՝ Լիլիթ Ներսիսյան**

- 2-րդ մրցանակ՝ «Արտ Սյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)
- 3-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Եվա Սահակյան, դաշնամուր, 1-ին դաս., դասատու՝ Մերի Գրիգորյան**

- 3-րդ մրցանակ՝ «Արտ Սյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Վիկտորիա Բարսեղյան, դաշնամուր, 1-ին դաս., դասատու՝ Մարինե Մարգարյան**

- 1-ին մրցանակ՝ «Արտ Սյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Հրաչյա Ղազարյան, դաշնամուր, 3-րդ դաս., դասատու՝ Մարինե Մարգարյան**

- 3-րդ մրցանակ՝ Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 8-րդ միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Մարկ Սարգսյան, դաշնամուր, 2-րդ դաս., դասատու՝ Կարինե Էլչյան**

- 1-ին մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Պողոս Մարի, ջութակ, 2-րդ դաս., դասատու՝ Կարմեն Հարությունյան**

- 2-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Արմեն Ղաբանյան, դաշնամուր, 2-րդ դաս., դասատու՝ Մարինե Մարգարյան**

- 1-ին մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Տաթև Կիրակոսյան, ժող. երգեցողություն, 1-ին դաս., դասատու՝ Գոհար Բալյան**

- 1-ին մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Կատրին Ամիրխանյան, դաշնամուր, 2-րդ դաս., դասատու՝ Ռուզաննա Խասապետյան**

- 5-րդ մրցանակ՝ Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 8-րդ միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Ադելինա Մամիկոնյան, տավիղ, 2-րդ դաս., դասատու՝ Մայա Սրապյան**

- 3-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Մարուքյան Գաբրիելա, դաշնամուր, 2-րդ դաս., դասատու՝ Հասմիկ Հակոբյան**

- Դիպլոմակիր՝ Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 8-րդ միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Մարիա Ավագյան, ֆլեյտա, 2-րդ դաս., դասատու՝ Լիլիթ Ներսիսյան**

- 2-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Վահան Պողոսյան սաքսոֆոն, սաքսոֆոն, 2-րդ դաս., դասատու՝ Քնարիկ Բաբաջանյան**

- 3-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Էլեն Դավթյան, դաշնամուր, 2-րդ դաս., դասատու՝**

- 3-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Անդրանիկ Հովակիմյան, կլարնետ, 2-րդ դաս., դասատու՝ Վյաչեսլավ Մանուչարյան**

- 3-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Լեոնա Բաղդասարյան, թավջութակ, 3-րդ դաս., դասատու՝ Ռուբեն Դավթյան**

- 2-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Անահիտ Բաբայան, դաշնամուր, 4-րդ դաս., դասատու՝ Իրինա Հակոբյան**

- 3-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Դավիթ Թադևոսյան, կլարնետ, 4-րդ դաս., դասատու՝ Վյաչեսլավ Մանուչարյան**

- 4-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Կարեն Մարգարյան, ուդ, 4-րդ դաս., դասատու՝ Դավիթ Սայադյան**

- 4-րդ մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Քրիստինե Քելեգյան, տավիղ, 5-րդ դաս., դասատու՝ Մայա Սրապյան**

- 2-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Լևոն Ավետիսյան, գալարափող, 5-րդ դաս., դասատու՝ Արթուր Հովհաննիսյան**

- 1-ին մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Առնո Ոսկանյան, շեփոր, 6-րդ դաս., դասատու՝ Գոռ Աղաբեկյան**

- 1-ին մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Էվա Սարգսյան, վոկալ, 6-րդ դաս., դասատու՝ Լիլիթ Սիմոնյան**

- 2-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Տաթև Կիրակոսյան, քանոն, 6-րդ դաս., դասատու՝ Արմինե Հարությունյան**

- 1-ին մրցանակ՝ «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Լոռի Շատոյան, թավջութակ, 7-րդ դաս., դասատու՝ Ռուբեն Դավթյան**

- 2-րդ մրցանակ՝ «Արտ Մյուզիք» միջազգային 16-րդ մրցույթ-փառատոն (Հայաստան)

**Արշակ Բարսեղյան, դաշնամուր, 9-րդ դաս., դասատու՝ Մարինե Մարգարյան**

- Պլատինե մրցանակ՝ Սեն-Սանսի անվան երաժշտական միջազգային մրցույթ (Մեծ Բրիտանիա)



## Դպրոցի գերազանցիկները

- Վիկտորիա Բարսեղյան, դաշնամուր, 1-ին դաս., դասատու՝ Մարինե Մարգարյան
- Արմեն Ղաբանյան, դաշնամուր, 2-րդ դաս., դասատու՝ Մարինե Մարգարյան
- Մարի Պողոս, ջութակ, 2-րդ դաս., դասատու՝ Կարմեն Հարությունյան
- Ադելինա Մամիկոնյան, տավիղ, 2-րդ դաս., դասատու՝ Մայա Սրապյան
- Քրիստինե Մելիք-Շահնազարովա, ֆլեյտա, 2-րդ դաս., դասատու՝ Սոնա Հարությունյան
- Սամվել Կուզիկյան, տրոմբոն, 3-րդ դաս., դասատու՝ Հովակիմ Փարսադանյան
- Ռիմա Ղազարյան, քանոն, 4-րդ դաս., դասատու՝ Արմինե Ասատրյան
- Մարի Պապյան, վոկալ, 4-րդ դաս., դասատու՝ Լուսինե Այվազյան
- Լիլի Հակոբյան, դաշնամուր, 5-րդ դաս., դասատու՝ Իրինա Հակոբյան
- Աշխեն Ավանեսյան, ալտ, 5-րդ դաս., դասատու՝ Յանա Դարյան
- Ազատ Խոնդկարյան, շվի, 5-րդ դաս., դասատու՝ Սամվել Երկնափեշյան



# Դպրոցի շրջանավարտները

## ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Խաչատրյան Ժանետ, դասատու՝ Մ.Մարգարյան (գերազանցությամբ)
Ջհանգիրյան Արսինե, դասատու՝ Գ. Մարգարյան
Ջաղինյան Ելիզավետա, դասատու՝ Ա. Կոստանյան
Գրիգորյան Ժասմին, դասատու՝ Մ. Գրիգորյան
Մարտիրոսյան Վահե, դասատու՝ Է. Կիրակոսյան
Գորոյան Սերոբ, դասատու՝ Է. Կիրակոսյան
Աղաջանյան Էլիզա, դասատու՝ Ա. Լազարյան
Բարսեղյան Արփի, դասատու՝ Ռ. Գևորգյան
Գաբրիելյան Մարիա, դասատու՝ Ն. Նիկողոսյան
Թուֆենկչյան Վան, դասատու՝ Ն. Տեր-Սարգսյան
Սահակյան Յանա, դասատու՝ Ա. Ֆարսյան
Ավագյան Արիանա, դասատու՝ Ա. Հլղաթյան (գերազանցությամբ)
Վանյան Իռեն, դասատու՝ Ա. Հլղաթյան (գերազանցությամբ)
Տիգրանյան Մարկ, դասատու՝ Ռ. Կոզին
Հեքեքյան Աննա, դասատու՝ Հ. Անչարակյան (գերազանցությամբ)
Մարգարյանց Արեգ, դասատու՝ Վ. Բալայան
Չախմախչյան Արեն, դասատու՝ Վ. Բալայան
Չաթոյան Մարի, դասատու՝ Կ. Էլչյան
Ջանիբեկյան Արման, դասատու՝ Կ. Էլչյան
Ջանիբեկյան Օվսաննա, դասատու՝ Կ. Էլչյան

## ԼԱՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Ենոքյան Մանե (ջութակ), դասատու՝ Կ. Հարությունյան
Ասատրյան Եվա (ջութակ), դասատու՝ Ն. Անտաշյան
Սարգսյան Էլենա (ջութակ), դասատու՝ Ս. Ստեփանյանց
Նալբանդյան Եվա (ջութակ), դասատու՝ Ժ. Մկրտչյան
Մխիթարյան Միշել (ջութակ), դասատու՝ Տ. Տողրամաջյան
Կիրակոսյան Անի (ջութակ), դասատու՝ Ա. Մկրտչյան
Բայադյան Անի (կիթառ), դասատու՝ Մ. Մովսիսյան
Կանդիլյան Էդուարդ (կիթառ), դասատու՝ Մ. Մովսիսյան
Տեր-Հովհաննիսյան Նարեկ (կիթառ), դասատու՝ Հ.Ջաղացպանյան
Մկրտումյան Էրիկա (կիթառ), դասատու՝ Հ. Ջաղացպանյան

## ՄԵՆԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Լոպոյան Տաթև, դասատու՝ Լ. Այվազյան

## ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Մուրադյան Էմմի (ֆլեյտա), դասատու՝ Լ. Ներսիսյան
Ղարիբյան Մանե (ֆլեյտա), դասատու՝ Լ. Ներսիսյան
Սայան Յանա (ֆլեյտա), դասատու՝ Լ. Պերիխանյան
Օքսուզյան Դանիելլա (ֆլեյտա), դասատու՝ Ն. Ավագյան
Մկրտչյան Արեգ (ֆլեյտա), դասատու՝ Ս. Հարությունյան
Պետրոսյան Օվսաննա (հոբոյ), դասատու՝ Ա. Ղազարյան
Սարգսյան Դանիել (կլարնետ), դասատու՝ Ս. Մարգարյան
Ստեփանյան Լիլիթ (կլարնետ), դասատու՝ Ս. Մարգարյան (գերազանցությամբ)
Առաքելյան Դավիթ (սաքսոֆոն), դասատու՝ Ք. Բաբաջանյան
Ասոյան Արմեն (սաքսոֆոն), դասատու՝ Ա. Նավասարդյան
Մկրտչյան Նարեկ (շեփոր), դասատու՝ Գ. Աղաբեկյան
Աբրահամյան Խորեն (շեփոր), դասատու՝ Գ. Աղաբեկյան
Թադևոսյան Ռուբեն (տրոմբոն), դասատու՝ Հ. Փարսադանյան

## ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Կիրակոսյան Մերի (քանոն), դասատու՝ Ա. Հարությունյան
Բադալյան Աննա (քանոն), դասատու՝ Ն. Զաքարյան
Բադալյան Արթուր (դուդուկ), դասատու՝ Հ. Երեմյան
Թովմասյան Էմիլ (ակորդեոն), դասատու՝ Ա. Մկրտչյան
Բայանդուրյան Ջիվան (սրինգ), դասատու՝ Ա. Մարգարյան
Պետրոսյան Նարեկ (դհոլ), դասատու՝ Է. Տեր-Կարապետյան
Եղոյան Համլետ (դհոլ), դասատու՝ Է. Տեր-Կարապետյան

## ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաբայան Անետ (դաշնամուր), դասատու՝ Ս. Մարտիրոսյան
Վարդանյան Ստեֆանի (դաշնամուր), դասատու՝ Լ. Զաքարյան
Բաղդասարյան Միքայել (դաշնամուր), դասատու՝ Ա. Խաչատուրյան
Թորոյան Կարինե (դաշնամուր), դասատու՝ Ս. Իլխազյան
Վարդանյան Նատալի (դաշնամուր), դասատու՝ Ա. Խաչատուրյան
Գրաբսկայա Վիկտորիա (դաշնամուր), դասատու՝ Ա. Գրիգորյան
Պետրոսյան Էմիլյա (դաշնամուր), դասատու՝ Ա. Լազարյան
Գասպարյան Էլլադա (դաշնամուր), դասատու՝ Ա. Այվազյան
Սահակյան Հայկ (ջութակ), դասատու՝ Կ. Հարությունյան
Բոստանջյան Նիկոլաս (կիթառ), դասատու՝ Կ. Հակոբյան
Մելիքսեթյան Գոռ (կիթառ), դասատու՝ Կ. Հակոբյան
Դավթյան Դավիթ (կլարնետ), դասատու՝ Ս. Մարգարյան
Սահակյան Սամվել (սաքսոֆոն), դասատու՝ Ա. Նավասարդյան

# ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄ

## Դաշնամուրային բաժին N 1

**Իրինա Հակոբյան *(բաժնի վարիչ)***
Արմինե Շմավոնյան
Հասմիկ Անչարակյան
Նարինե Նիկողոսյան
Էմմա Վարդապետյան
Արմինե Գրիգորյան
Դոնարա Հովսեփյան
Վիկտորյա Բալայան
Մարինե Մարգարյան
Զարուհի Մկրտչյան
Մարիաննա Ոսկանյան
Նաիրա Տեր-Սարգսյան
Շահանե Հարությունյան

## Դաշնամուրային բաժին N 2

**Գայանե Մարգարյան**
***(բաժնի վարիչ)***
Էլեն Կիրակոսյան
Սոֆա Մարտիրոսյան
Հասմիկ Շատոյան
Լիանա Զաքարյան
Աստղիկ Խաչատուրյան
Արուսյակ Կոստանյան
Սիլվա Իլխազյան
Աստղիկ Հլղաթյան
Ռուբեն Կոզին
Արմենուհի Բադեյան
Նունե Հարությունյան
Մարինե Բարխուդարովա
Հասմիկ Սարիբեկյան
Ռիմա Գևորգյան
Անահիտ Նազարեթյան

## Դաշնամուրային բաժին N 3

**Կարինե Էլչյան *(բաժնի վարիչ)***
Արեգնազ Այվազյան
Անահիտ Լազարյան
Անահիտ Կարապետյան
Արաքսյա Ֆարսյան
Թամարա Հարությունյան
Լիլիթ Աբովյան
Հասմիկ Հովսեփյան
Մերի Գրիգորյան
Նարե Վարդանյան
Նելլի Նադարյան
Նունե Հարությունյան
Ռուզաննա Ասոյան
Ռուզաննա Խասապետյան
Արփինե Կալինինա (կոմպոզիցիա)

## Լարային բաժին

**Լուսինե Աշիկյան *(բաժնի վարիչ)***
Անիտա Նալբանդյան
Աստղիկ Մկրտչյան
Արմեն Բաղդասարյան
Արմինե Գրիգորյան
Ժաննա Մկրտչյան
Նունե Անտաշյան
Կարեն Խաչատրյան
Կարմեն Հարությունյան
Հակոբ Ջաղացպանյան
Մայա Սրապյան
Մանյա Մովսիսյան
Յանա Դարյան
Ջեմմա Մանուկյան
Ռուբեն Դավթյան
Սուսաննա Ստեփանյանց
Վահե Բրուտյան
Տիգրան Տողրամաջյան
Տիրուհի Սարգսյան

### Փողային և հարվածային գործիքների բաժին

**Սոնա Հարությունյան**
***(բաժնի վարիչ)***
Ալբերտ Նավասարդյան
Ալբերտ Սաֆարյան
Աստղիկ Ղազարյան
Արամայիս Մանվելյան
Արթուր Հովհաննիսյան
Գոռ Աղաբեկյան
Լիլիթ Ներսիսյան
Լիլիթ Պերիխանյան
Հարություն Շախկյան
Հովակիմ Փարսադանյան
Նարեկ Ավագյան
Սմբատ Մարգարյան
Ստանիսլավ Բախշիյան
Վյաչեսլավ Մանուչարյան
Քնարիկ Բաբաջանյան
Անդրանիկ Քոչար

### Ազգային նվագարանների բաժին

**Արմինե Հարությունյան**
***(բաժնի վարիչ)***
Ազնիվ Մինասյան
Ավագ Մարգարյան
Արմեն Մկրտչյան
Արմինե Ասատրյան
Արսեն Միրզոյան
Գարիկ Նազարյան
Դավիթ Սայադյան
Էդուարդ Տեր-Կարապետյան
Հայկ Երեմյան
Նարինե Զաքարյան
Սամվել Երկնափեշյան
Քրիստինե Մնացականյան

### Մեներգեցողության բաժին

**Իրինա Զաքյան *(բաժնի վարիչ)***
Արփինե Աղջոյան
Գոհար Բալյան
Զարինե Միլիտոնյան
Լիլիթ Սիմոնյան
Լուսինե Այվազյան

### Դաշնամուրային նվագակցության բաժին

Էլեն Կիրակոսյան
Լիլիթ Աբովյան
Լենա Թորոսյան
Ալինա Հակոբյան
Անուշ Հյուսնունց
Անտոն Սուշչակով
Ռուբեն Կոզին
Աստղիկ Խաչատուրյան
Գոհար Կարապետյան
Էլլադա Գալոյան
Լիլիթ Մելքոնյան
Կարինե Էլյան
Հասմիկ Հովսեփյան
Հասմիկ Նալբանդյան
Մարինե Բարխուդարովա
Մերի Գրիգորյան
Նադեժդա Հակոբյան
Շահանե Հարությունյան
Ռուզաննա Կոնջոյան
Սյուզի Անտոնյան

### Երաժշտատեսական առարկաների բաժին

**Քնարիկ Թորոսյան (*բաժնի վարիչ*)**
Ժաննա Թերլեմեզյան
Իրինա Անդրանիկյան
Մելինե Սելվինազյան
Նաիրա Գրիգորյան
Նարինե Մաթևոսյան
Ռուզաննա Կարապետյան
Քնարիկ Բաբաջանյան
Աննա Հարությունյան

### Երգչախմբերի, համույթների և նվագախմբերի ղեկավարներ

Մարինե Ավետիսյան *(«Բողբոջներ» երգչախումբ)*
Մարիա Գալստյան *(«Հասկեր» երգչախումբ)*
Թամարա Գալստյան («Փաթիլներ» երգչախումբ)
Լունարա Գրիգորյան *(«Շողեր» երգչախումբ)*
Նիերի-Գրեյս Բարդակցյան *(«Շողեր» երգչախումբ)*
Կարեն Ամիր Լաթիֆի *(ավագ երգչախումբ, Զանգերի համույթ)*
Կարմեն Հարությունյան *(ջութակահարների անսամբլ)*
Արման Գրիգորյան *(կամերային նվագախումբ)*
Ալբերտ Սաֆարյան *(փողային նվագախումբ 1)*
Հակոբ Սարգսյան *(փողային նվագախումբ 2)*
Քնարիկ Բաբաջանյան *(փողային նվագախումբ 3, Զանգերի համույթ)*
Արմինե Հարությունյան *(Ժողգործիքների համույթ)*
Նարինե Զաքարյան *(Ժողգործիքների նվագախումբ)*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ

Սվետլանա Հակոբյան (փոխտնօրեն ուսումնական գծով)
Գայանե Սերոբյան (փոխտնօրեն վարչատնտեսական գծով)
Աստղիկ Հլղաթյան (փոխտնօրեն կազմակերպական գծով)
Արևիկ Թադևոսյան (գլխավոր հաշվապահ)
Արմինե Ավետիսյան (հաշվետար)
Մելինե Առաքելյան (գործավար)
Անիտա Նալբանդյան (գործավար)
Մարինե Ասմարյան (գրադարանավար)
Գագիկ Վարդանյան (տնտեսվար)




**ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**
ք. Երևան, Մաշտոցի պող., 46ա
+374 10 561 400, +374 10 546 464
sayatnovams@gmail.com